

Վ. Ա. ՄՈԼՈՏՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆ

Վ. Ա. ՄՈԼՈՏՈՎԻ

Պրոֆ., պատմ. գիտ. դոկտոր

ԱՆՑՅԱԼ ԴԱՐԱՎԵՐՁԻ ՀԲՅԱՅԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ  
ԳԵՐՄԱՆԻԱԿԱՆ ՓԱՇԽՉՄԻ ԳԻՇԱՏԻԶ  
ՆԵԽՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1943



Վ. Մ. ՄՈՒՇՏՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՍՅԱՐԱՆ

Վ. Ա. Շ ՈՒ Ն Ի  
Պրոֆ., պատմ. գիտ. դոկտոր



ԱՆՑՅԱԼ ԴԱՐԱՎԵՐՃԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՅՐՈՒԼ  
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՓԱՇԻԶՄԻ ԳԻՇԱՏԻՉ  
ՆԱԽՈՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

11  
23401  
H



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1943

В. РИТУНИ  
АРМЯНСКАЯ ПРЕССА КОНЦА ПРОШЛОГО  
ВЕКА О ХИЩНЫХ ПРЕДШЕСТВЕННИ-  
КАХ НЕМЕЦКОГО ФАШИЗМА

(На армянском языке)

Издание Ереванского Госуд. Университета  
им. В. М. Молотова

Цена 1 р.

Վ. ՌԵՇՑՈՒԽԻ

(պրոֆեսոր, պատմական գիտուր. դպրուր)

ԱՆՑՅԱԼ ԴԱՐԱՎԵՐՁԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ  
ՖԱՇԻԶՄԻ ԳԻՇԱՏԻՉ ՆԱԽՈՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

XIX դարի վերջին երկու տասնամյակի հայկական մամուլի էջերում կարելի է գտնել ո՞չ սակալ սուր քննադատական դիսություններ, զայրույթով լի մերկացումներ՝ ուղղված գերմանական կազմական դիշատիչների խմբերիալիստական անհաղ ախորդակների և օտարակեր քաղաքականության դեմ:

Այդպիսի բարանդակությամբ հոգվածներ կան թե՛ լիբերալ «Մշակ»-ում, թե՛ չափավոր-բուրժուական «Արձագանք»-ում և թե՛ պահապահողական «Նոր դար»-ում: Լրագրական արդ հոգվածները դրված են զանազան տարիներում, այս կամ այն կոնկրետ գեղքի առթիվ և տարբեր հեղինակների գրչի են պատկանում:

Այդ հոգվածների մի մասը մեր օրերում որոշ հետաքրքրություն է ներկայացնում այն պատճառով, որ դրանց հեղինակներն այս կամ այն ձեռվ հանդես են գալիս գերմանական ֆեոդալներից, կամ կազմական կամ դիշատիչների խմբերիալիստներից ոտնահարված ժողովուրդների աղասության և աղգային իրավունքների պաշտպանի գերում:

Այսպիս, օրինակ, առելությամբ ու զայրույթով են տողորված այն առդերք, որ գետեղված են «Մշակում» ընտվեմ Մերձբալթյան երկրների գերմանական օտարակեր ֆեոդալական շահագործողների, որոնք այդ երկրները հրով ու արյունով նվաճած «չուն ասպետների» ոհմակի հետնորդներն են, ոհմակ, որի ութ դար առաջ սկսած նվաճողական գործի շարունակողն է հայտարում այժմ իրեն արյունու Հիտլերը:

«Նոր դարը» վճռականորեն դասապարտում է այն վայրագմիջոցառումները, որ Բիսմարկն ուղղում էր լիների գեմ, ապա ընդհանրապես այն թշնամական գործի շարունակողն է հայտարում այժմ իրեն արյունու Հիտլերը:

վոն ժողովուրդների նկատմամբ, ինչ որ հրեշտավոր չափերի է հասցըել այժմ գոզանային ֆաշիզմը:

«Արձագանքը» համարձակ մերկացնում է Վիլհելմ II ժամանակի խմբերիստական Գերմանիայի համաշխարհային տիրապետության համեմելու սահմանադարձ տենչերը, որ այժմ Հիտլերի ֆաշիստական կլիկի արյունուտ ցնողքների առանցքն են կաղմում:

Հետաքրքրական են նշված օրգանների հողվածները մեզ համար նաև այն կողմից, որ բոլորակում են սուր ու գիտուկ հարվածներ՝ ուղղված ֆաշիստական այժմյան հրեշտավոր սասայական թեորիայի նախկին խալարամիտ, կամ չարամիտ «գիտական» ներկայացուցիչների գեմ:

Կապիտալիստական Գերմանիայի ներքին կյանքի որոշ խոցերը նույնակես չեն վրիսել մեր մամուլի ուշադրությունից: Հայտնի է, օրինակ, որ մեր օրերում գերմանական ֆաշիզմը կանանց հասցեի է «արիական իշխողներ» ծնող կենտանի մեքենայի անարդ վիճակին: Ֆաշիզմի նախորդների կապիտալիստական Գերմանիան պակաս ստորացուցիչ ըջանակներ չեր ստեղծել կնոջ գործունեության համար: Այդ էլ մերկացնում և խարազանում են անցյալ գարավերջի մեր հրապարակախոսները:

Պակաս հետաքրքրական չէ այն դիտողությունը, որ գտնում ենք «Հյուսիսաֆիայում» Նազորենին «Կայծակի արագությամբ» թուլաստանին հաղթելու ծրագրի անխուսափելի տապալման մասին:

Հայկական մամուլում այս կամ այն առթիվ արտահայտված Հիշյալ մտքերն ու դիտողությունները, թվում է, ինքնին արդեն հետաքրքրական են, իսկ այժմ դրանք էլ ամելի ուշադրավ են իբրև մեր մոտիկ անցյալի հայ հասարակական մտքի տարրեր հոսանքների ներկայացուցիչների քննադատական վերաբերմունքի նմուշներ, որոնց մեջ իր արժանի գնահատականն են ստացել գերմանական ֆաշիզմի հեռակոր ու մոտիկ նախորդների գիշատիչների պրակտիկան, մասամբ նաև թեորիան:

Համառուսակի ծանոթանանք այդ բոլորին:



Անցյալ դարի 80-ական թվականների սկզբին հայկական մամուլում, մասնաւլորապես «Մշակում», բազմական աշխույժ քննության առարկան ֆեոդալական գարձանը գեղագիտական ֆեոդալիզմի, Փեոդալական հողատե-

բության, կարլածատերերի և գյուղացիների փոխարքարելության հարցերը:

Դրա անմիջական խթաններից մեկն էլ այն էր, որ կոռավարական մարմիններում այդ ժամանակ քննվում էր Անդրկովկառում գյուղացիական ռեֆորմի անցկացման շրջանում չլուծված կարեռագույն հարցերից մեկը՝ կարլածատերական գյուղացիների հաղարձնի հետպնման, այլ կերպ ասած, գյուղացիներին «ժամանակավոր պարտապանի» կիսաճորտական վիճակից հանելու խնդիրը:

Վերոհիշյալ հարցերի պարզաբանմանը 1882 թ. ընդարձակ հոգվածներ է նիլիրել «Մշակում» երիտասարդ հայ գիտնական Սոլոմոն Եղիազարյանցը (Հետազայռում Կիելի համալսարանի պրոֆեսոր): Հենց այդ հոգվածներում է, որ նա ի միջի այլոց մի քանի հետաքրքրական դիտողություններ է առնում՝ իր անձնական տպակորությունների հիման վրա՝ կստոնիայի և Լատիֆիայի գերմանական կարլածատերերի և նրանց ֆեոդալիկան ու կապիտալիստական լծի տակ հեծող կստոնացի և լատիչ գյուղացիների փոխարքարելության մասին:

Էսաունիայում և Լատիֆիայում ճորտատերական երավունքը վերացվել էր 1817—1819 թ. թ., բայց ամբողջ Հողը թողնվել էր գերմանացի կարլածատերերին. գյուղացիությունը գրված էր կամ բատրակի կամ կարլածատերական հողը վարձակալողի վեհակում, ուրիշ խոսքով ֆեոդալական համարյա անխախտ մնացած լծին ավելացվել էր նաև կապիտալիստական շահագործությունը: կստոնացի և լատիչ գյուղացիության տասնամյակներ տևող հուզումները ճնշվում էին զենքով, իսկ 50-ական և 60-ական թ. թ. լրացուցիչ ռեֆորմները քիչ բան փոխեցին նրանց կյանքում. գյուղացիք գարձայլ հողարտին չստացան և գերմանացի կարլածատերերի ֆեոդալական իրավունքները գյուղացիության նըղկատմամբ շատ ավելի մեծ չափով պահպեցին, քան, օրինակ, բուն ոռուսական նահանգներում:

Նկատի ունենալով այս ամենը՝ անցնենք Սոլոմոն Եղիազարյանցի գիտողություններին:

«Մենք յոթ շաբաթ մնացինք գյուղում, — պատմում է նա, — և անձամբ գիտեցինք այսեղի հարաբերությունները ու գյուղացու գբությունը: Գետք է ասած, ոչ չ մի տեղ Ռուսաստանում գյուղացու համար այնքան դժվար չէ հող ձեռք բերել, ինչպես այստեղի գերմանացից մոտ. գերմանացիների դժոխային կատ-

կանությունը հայտնի է, որոնք ամեն տեսակ դժվարացնում են այստեղի էստոնացիներին և լատվիներին հող ձեռք բերել»:

Զարմանալի չէ ուստի, որ էստոնացի և լատվիչ դյուլացիները մեծ ատելությում են լցված գեղի իրենց դարսավոր շահագործողները՝ գերմանական կարլածատերերը, ինչ որ լուսին արդարացի է համարում այդ դյուլացիների կյանքի պայմաններին մոտեկից ծանոթացած հեղինակիլ:

«Պետք է ասենք՝ էստոնացիք ու լատվիները ունեն իրավունք իրուր սրբե ատել այտեղի գերմանացիներին իրանց դժոխային և սականության համար» (ըստգծումը հեղինակին է: —Վ. Ռ.) :

Գերմանական կարլածատերերի այդ «դժոխային ևսականության» հետեւանքները էստոնացի և լատվիչ դյուլացիների և ընդհանրապես գերմանացիներին հարեւան ժողովուրդների նկատմամբ հետեւալ ձեռվ է ներկայացնում իր ընթերցողներին Սոլոմոն Եղիազարյանցը. «Զիարծեմ գերմանացին իր հարեւան ազգերին ոչչացնելու և ճնշելու ընդունակությունով բաշխողականերից հետ մնա: Խոսքիրիս ապացուց կարող են լինել, առաջին՝ Օստրոգիյան նահանգները (այսինքն մեր այժմյան էստոնիան և Լատվիան: —Վ. Ռ.) և հետո գերմանացվոց պատմությունը, ինչպես նրանք կուլ են տալիս սլավոնական ցեղերը»:

Հեղինակը, անշուշտ, նկատի ունի անդրէլոյան սլավոնական ցեղերին, որոնք ապրում էին կլաս-Վիելա, գետերի արանքում՝ Բալտիկ ծովի հարավային ափերին, հարեւան էին լեհերին և չեխերին ու X—XII դարերում համառորեն պայքարում էին գերմանական ֆեոդալների ազրեսսիայի գեմ իրենց ազգային ինքնուրույնությունը պահպանելու համար<sup>1)</sup>:

Գերմանացի նվաճողի նենգ քաղաքականությունը հարեւան ժողովուրդների նկատմամբ հետեւալ ձեռվ է նկարագրում Սոլոմոն Եղիազարյանցը. «...Քանի նա թույլ է, հարեւանին հավատացնում է, թե պատրաստ է նրա հետ հանուն մարդկության և քաղաքակրթության եղբայրանալ: Հենց որ ոտը տեղ բանեց ու զորացավ՝ գերմանացին կվկան հարեւանին ճնշել ու խեղդել անողորմարար, մինչև որ բոլորովին ջնջի երկրի երեսից»:

Իսկ գերմանական հարիչտակողի անհաղ ազահության մասին նա սարկագով նկատում է. «...Եթե գերմանացին գաղթի դը

1) Տես, օքինակ, ն. Գրացիանակու հոդվածը՝ «Задълбокое славяне в борьбе с немецкой агрессией в X—XII вв.», «Исторический Журнал», № 8, за 1942 г., стр. 37—42.

ժողքը, նաև խոկույն կոկոսի, քանի իրեն թու՛յլ է զգում, սատա-  
նաների հետ եղայլություն անել, բայց հենց որ զորացավ՝  
կէհծնի սատանաների շնչքն և նրանց աքսորելով՝ կամի՝ „Macht  
euch aus dem Staube, denn auch die Hölle ist unser deutscher  
vaterland!“ («կորե՛ք այսուղից, որովհետեւ դժողքն էլ մեր՝ գեր-  
մանացիների հայրենիքն է»):

Երիտասարդ հայ գիտնականը նշում է ապա, որ հեշյալ գլ-  
ծերը հասուլե են ընդհանրապես բոլոր գերմանական նվաճողնե-  
րին, այդ թվում նաև կապիտալիստական Գերմանիայի համելչ-  
տակիչներին: Եվ այդ կապակցությամբ էլ հիշատակում է, թե  
ի՞նչն է առիթ ծառայել այս բոլոր գիտողություններն անելու  
դերմանական Փետուրալական նվաճողների մասին:

1882 թ. «Մշակում» և այլ թերթերում հազորդվել էր մի  
լուր այն մասին, թե «գերմանացիները գիտավորություն տնեն  
գաղթականներ ուզարկել տաճկաց Հայրատանը»: Եվ ահա Ե-  
ղիազարյանցը կես հեղուությամբ, կես մտահոգությամբ նկա-  
տում է: «Զգույշ մնացեք, որ մի օր Հայրատանն էլ չանդանի  
«գերմանացիների հայրենիք»:

Մի այլ հանգամանք էլ չի վրեակում նրա ուշադրությունից:  
Գերմանական Փետուրալական ու կապիտալիստական իշխող զասա-  
կարգերի նվաճողական քաղաքականությունը, հարեան ժողո-  
վրագներին ստրկացնելու և բնաջնջելու գարավոր անարդ պրակ-  
տիկան իր «իդեոլոգիական» Հիմնավորումն էր ստանում Գերմա-  
նիայի պաշտոնական «գիտության» ներկայացուցիչների կողմից.  
տերերի պահանջով գիտությունն ի սպաս էր դրվում նրանց գի-  
շտափէ քաղաքականության նպատակներին:

Հայ գիտնականին խորապես վրայում է այդ, և նա իր  
քննազատական գիտողությունները գերմանական Փետուրալական  
նեան շահագործողների և կապիտալիստական անհագ հարժատա-  
կիցների մասին վերջացնում է Գերմանիայի պաշտոնական գի-  
տության մարդկանց երեսին այն մեղադրանքը շպրտելով, որ  
նրանք մեղսակիցն են հանդիսանում այդ ամենին, քողարկում և  
գունազարդում են իրենց թերթիայով իրենց տերերի արյունոտ  
պրակտիկան:

«Եվ այս սարսափելի եսականությունը և մարդակերությու-  
նը մինչև անգամ գերմանացի գիտնականներն էլ են անվանում  
«գերմանացիների ընդունակություն քաղաքակրթությունը առաջ  
տանելու և պիտություն (Staat) հիմնելու» («Մշակ», 1882 թ.,

№ 56, Սոլոմոն Եղիազարյանց «Թեոդարական հողատիրությունը Եղողագում, մեր երկրի հայրանակ մասերում և մեր գյուղացու այժմյան անտեսական դրությունը») :

Այսպիսով, Հայ երիտասարդ գիտնականը վաթում տարի առաջ արժանի գնահատական է տարիս Փաշխատական արդի կեղծ գիտության ոչ շատ հեռավոր նախորդներին, որոնք երեսց հերթին իդեոլոգիական հող են նախասպատրաստել կապիտալիստական Գերմանիայում այնպիսի այլանդակ վիճակածքի աշխարհ գալու համար, ինչպիսին է հիուներյան Գերմանիայի հրեշավոր «Գիտությունը», որն իր ամենաանարդ ռասայական թեորիայով «Հիմնավորում» ու ջատագովում է Փաշխատական բարբարության արյունոտ գործն ամբողջ աշխարհում :

Այդ «Թեորիայի» նախկին վարիանտների դեմ վճռականորեն հանդես է դալիս 1887 թ. «Նոր զարի» Պետերբուրգի ուսումնող թղթակիցը՝ Զայնը, պաշտպան կանգնելով առաջադեմ գիտության և դրա համար հենավելով մարդկության ամբողջ պատմության վրա :

«Հայոնի է,— գրում է նա, — որ գիտությունը չէ ընդունում իրեն թե ազգերը ունեն ցեղական ընդունակություն կամ անընդունակություն, . . . պատմությունը չդիտելով ո'չ մի այդպիսի աղու» :

Բասարական թեորիայի կողմնակիցների մասին նա կարգում է այսպիսի արդարացի գատառնձիռ. «Համարձակ կարելի է առաջ արագ առանձնահատկություն ընդունողները մեծ մասամբ սքուլում են կողմնակի նպատակներ կամ տգիտություն» («Նոր դար», 1887 թ., № 158, Զայնի թղթակցությունը Պետերբուրգից) :

Այսպիս ուրեմն, սքուլած «կողմնակի նպատակներ կամ տղիտություն», — ահա Փաշխատական ռասայական թեորիայի նախկին վարիանտների հիմքն ըստ Զայնի: Ավելացնենք միայն, որ այդ թեորիայի որժմյան քարոզիչների ո'չ միայն տգիտությունը, այլև չափամտությունն ու միջնադարյան խաղարամտությունը նույնապես ակներև իրողություն են, իսկ սքուլած «կողմնակի նպատակները» բացահայտորեն նշանակում են արյունոտ լուծ և սորիություն ամբողջ աշխարհի ազատ ժողովուրդների համար:

\*\*\*

Կապիտալիստական Գերմանիայի սրավոնակեր ձգտումների և քաղաքականության մասին հետաքրքրական դիտողություններ է անում «Եորդարի» խմբադիր Սպանդարյանը:

Նա քննության առնելով Բիսմարկի հակառիչական քաղաքականությունը 1886 թ., այսինքն գերմանական կառավարության այն ծրագիրը, որ «Արևելյան Պրուսիայի լեհարնակ դավանելու ըստ գերմանական տարրը ուժեղացնելու, այլազես լեհական տարրը թուլացնելու» նպատակին էր հետամուտ, — նշում է, թե այդ, իհարկե, «...բնական է, որ Հարուցաներ նրա գեմ ամրով սլավ աշխարհի զայրույթը: ...Այսօր սլավ աշխարհը Բիսմարկին յուր ամենամեծ և ամենալավագործ թշնամին է համարում» («Եորդար», 1886 թ., № 18, Ս. Ս., Իշխան Բիսմարկի վերջին ձառի առթիվ):

Սպանդար Սպանդարյանն իր հերթին լիովին իրավացի է գտնում «սլավ աշխարհի զայրույթը» Բիսմարկի դեմ, որովհետեւ նրա այդ բնության քաղաքականությունն ուղղված է «ազգային ինքնավարության», ազգերի ինքնուրույն և ազատ զարգացման սկզբունքի դեմ: Իսկ ըստ Սպանդարյանի, «սերկար դարուս քաղաքական կյանքի տիրապետող միտքը — աղքայնության սկզբանը է»: Այդ սկզբունքի համաձայն, նշում է նա, ազատագրմեցին, օրինակ, իտալացիք, բարկանյան ժողովուրդները, այդ նույն սկզբունքի «ճնշման տարկ» սլավոնական այլ ժողովուրդներ «ազգային ինքնավարության» են հանել և հանում են:

Այս սրատաճառով էլ մեր սպահպանողական հրապարակախոսը, թեև ակնածությամբ է նայում կապիտալիստական Գերմանիայի չարաշուք կանցկերին և լավ պատկերացնում է նրա տրամադրության տակ եղած բնության միջոցների ազդու չափը, այնուամենայնիվ գտնում է, որ գժվար թե Բիսմարկն իր հակառակոնական քաղաքականությամբ հետամուտ լինի մի անիրագործելի նպատակի, այն է՝ սլավոն ժողովուրդների ոչնչացմանը: անհնար է, որ Բիսմարկը մտածե, թե «...անկարելին կարենա իրագործել, անկարելի բան է սլավ ազգերի ոչնչացումը»:

Ավելի շուտ, դատում է նա, «խոնդիրն միայն նրանումն է, թե ով պետք է տիրապետող լինի այս երկու ցեղերից գերմանական, թե՛ս սլավ տարրը: Իշխան Բիսմարկը ուզում է և կարծում է, որ գերմանականը պետք է լինի»: Իսկ իր հերթին Սպանդարյանը, նշելով դրա հետ կապված մեծ բարքությունները, ավե-

լացնում է . «Ապագային է մնում այդ խնդրի լուծումը, որ առանց «Երկաթի և արյունի» չի լուծվիլ» («Նոր-դար», 1886 թ., № 19, Ս. Ս., իշխան Բիսմարկի վերջին ճառի առթիվ) :

Հետաքրքրական է այն դիտողությունը, որ Ապանդաբյանն անում է ապագայում երկաթով ու արյունով լուծելի այդ խնդրի մեջ շահագրաված երկու ախոյանի՝ գերմանական և ուստունական ազգերի մասին . Բիսմարկը «...գիտե, թե ի՞նչ է անում և ինչ է ուզում, ինչպես որ իրենց ազգային արժանապատվությունը ճանաչող սլավ ազգերը գիտեն, թե իրենք ի՞նչ են ուզում և ինչ են անում և չեն կամ ենաւ կուլ գնալ գերմանականության մեջ» («Նոր-դար», 1886 թ., № 21, Ս. Ս., Դարձյալ իշխան Բիսմարկի ճառի առթիվ) :

Բիսմարկի իշխանության ժամանակ ճիշտ որ կարդիտավատական Գերմանիայի տերերը իրենց ուզածի և անելիքի հետ կարողացան հասկանալ նաև «իրենց ազգային արժանապատվությունը ճանաչող սլավ ազգերի» ուզածն ու անելիքը և առժամանակ չըհանդինեցին . «Երկաթի ու արյունի» միջոցին գիմել իրենց գիշատիչ ամսորժակիներին հաղորդ տալու համար :

Սակայն բարեր հանդգնությամբ և միջոցների մեջ ամենենին խորություն չփնտիլով՝ այդ «Երկաթի ու արյունի» ուղիի վրա կանգնեց Վելհելմ II իմպերիալիստական Գերմանիան XIX դարի վերջին տասնամյակից սկսած :

\*\*\*

Վելհելմ II ոչ միայն Մերձակոր Արևելքում ամուր հաստատվելու պատրաստություններ էր տեսնում . (Բազդատի երկաթուղու կառուցման ծրագիրը և այլն), «բարեկամանալով» սուլթանական թյուրքայի հետ, պաշտպան կանգնելով Սուլթան Համիդին և խարխուսելով նրա արյունու քաղաքականությունը թյուրքայի լծի տակ տառապող ժողովուրդների նկատմամբ, այլն. Նիկոլայ II իր թակարդը ձգելով և օգտագործելով, փորձեց հենարդան ստեղծել գերմանական իմպերիալիզմի համար Հեռավոր Արևելքում և 1898 թ. զավթեց Զինաստանի Կիաո-Զառու նախահանդիսար, միաժամանակ պարտարիցեցնելով չինական կառավարությանը հաստոցանելու Գերմանիային Կիաո-Զառուի վրա արած խոլործախքը, եթե նա երբեցէ ցանկանար գրա վոխարեն այլ, այլելի հարմաք նախահանդիսար հափշտակել :

Այս ամենի մասին սուր քննադատական հոդված է ուղարկել

«Արձագանքին» նրա Բերլինի ուսանող թղթակիցը՝ «Ատամի վարձ» բնորոշ վերնապրով:

Հենց հոգվածի վերնապրով կծու ծաղը է բովանդակում: Ուր անոնցը նշում է, որ Սուլթան Համիդի հետ «բարեկամություն» սկսած Գերմանիան Զինասառանից հափշտակություններ կատարելուց հետո՝ այնպիսի սպասարկություններ ել է դնում նրա վրա, ինչպիսին դնում էին սուլթանական թյուրքիայի հելուզակ պաշտօնյաները անպատճան ժողովրդի վրա, երբ լափում էին նրանից կուռապահած բարիքները, այսինքն «ատամի վարձ» ել էին սկանչում նրանից:

Ապա նա ընդգծում է գերմանական խմբերի ալիքմի հրեշավար մեղսակցությունն այն մասսայական ջարդերին, որ Սուլթան Համիդը 1890-ական թ. թ. կիսում կազմակերպեց թյուրքիայի քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում և հայերի մեջ և զայրությունի հարում է, թե «Թյուրքիայում կտառվող հարյուր հազարավոր քրիստոնյաներին դիմական ժպիտով դիսող և Սուլթանին հայոնի կերպով հովանավորող Գերմանիան» անմիջապես պատրա- վակ բանեց «Երկու գերմանացի կաթոլիկ քարոզիչների» սպա- նությունը Զինասառանում, սազմանավեր ուզարկեց այնտեղ, ոմբակոծեց չինական ծովափերը և հափշտակեց Կիաո-Զատոն:

Պահպատ զարբելի չէր այն գերքը, որ Վեհհեմ II կառավարու- թյունը և Գերմանիայի վշտող զաստիարակերի մամուլը բռնցին գեսպի Հունաստանը, երբ նա Կրետե կղզու հույների 1896—1898 թ. թ. առաստամբությանը սուլթանական վայրագ ոեժինի գեմ- աջակցություն էր ցույց տալիս, խրախուսելով նրանց ազատա- պահական պայքարը և իրենց մայր Երկրին միանալու ձգտումը:

Այդ առթիվ «Արձագանքի» թղթակիցը նկատում է, որ գեռ երեկ էր, երբ Հունաստանի եղբայրական օգնությունը Կրետեի հույներին «մե գերմանական կառավարությունը և թե մամուլի ազդեցիկ մասը» համարում էին մի «միջազգային սվագակային քայլ», որովհետեւ Հունաստանը «առանց հրապարակով պատե- րազմ հայոնելու» էր հանգես եկել ի պաշտպանություն իր ճընշ- ված ազգակիցների: Իսկ «այսօր նույն առվազակային քայլը» կատարում է Գերմանիան, առանց ամաշելու և կարմրելու, առ ունց պատերազմ հրապարակելու, տիրելով մի մեծ, չին և կուլ- տուրական ազգի լավագույն նախահամելեցից մինին»:

Սակայն այս ըոլորը, շարունակում է նա, միայն սկիզբն է այն կատաղի խմբերի խստական մոլուցքի, որով այսօր բռնված-

է Գերմանիան։ Վելհելմ II ճգնում է օգտագործել Զինաստանի նկատմամբ կիրառած իր հաջող «ավազակային քայլը» և հարկադրել ուսցիստարին, որ նա ընդունի կառավարության առաջադրած ծովային սպառագինումների նոր պլանը, որով Գերմանիան «առաջին տերությունը» կզանա աշխարհում նաև ծովային ըսպառապինումների ասպարեզում, ինչպես այդ բանին հասել է արդեն ցամաքային զինման մեջ։

«Արձականքի» Բերլինի թղթակիցը նշում է ապա, որ Գերմանիայի այդ կատաղի միլիոնարիստական քաղաքականության դեմ եռանդարդին բողոքում ու պայքարում է միայն բանվորական մամուլը։

Այն, ինչ որ XIX դարի վերջին կատարվում էր լմպերիալիստական Գերմանիայում, սպառագինման այն խելագար տենդը, որով բռնաշած էին գերմանական յունկերական-կապիտալիստական իշխող դաստիարակեբը, ուսանողին բերում է այսպիսի արդարացի եղբակացության։ «Փիլիսոփաների և բանաստեղծների հայրենիքը դառնում է կազարմաների երկիր...» («Արձագանք», 1898 թ., № 2, Ռւսանող, Ատամի վարձ)։

\*\*\*

«Կազարմաների երկիրը» ոչ միայն սպառնալիք էր դառնում ամբողջ աշխարհի խողաղության, մոտիկ ու հեռավոր ժողովուրդների ազատության համար, այլև ճգնում էր չղթայած պահել հենց իր ժողովրդի ստվար պրոլետարական մասսաներին, խեղդել նրանց ազատազբական պայքարը, կոտրել նրանց դիմուրությունը զինվորական կոպիտ ույժի և կիսաֆեոզարական-յունկերական բռնի միջոցառումների օգնությամբ։

Միջնադարը հիշեցնող ստորագաս վիճակի էր մատնալած կապիտալիստական Գերմանիայում մասնավորապես կանանց սեռը, որն այնտեղ գուրկի էր անդամ բուրժուական կարգերի ընձեռնած շատ իրավունքներից, օրինակ, կրթության ու հասարակական կյանքի ասպարեզում և շարունակում էր կաշկանդված մաս խոհանոցի և մանկանոցի նեղ շրջանակներում։

Մի մասնավոր դեպք, այն է՝ մի երիտասարդ հայ քժշկուհու հրապարակային հաջող ելույթը վիեննայում, առիթ է ծառայում «Արձականքին» անդրադառնալու կապիտալիստական Գերմանիայի ներքին կյանքի այդ խորին իր աշխատավորական համարանի նախկին ուսանող է և արատմում է իր անմիջական տեսածն ու դիտածը գեր-

մանուհու վիճակի մասին բարձրագույն գործոցում և մասնագիտական բարձր ուսումնա աշխարհելուց հետո:

«...Եվրոպայում, մանավանդ Գերմանիայում և Ավստրիայում, կանանց բարձրագույն կրթությունն այնպիսի սահմանների մեջ է դրված, որ համարականական կիմն խկառիքս որպես մի հաղվագույն երեւլյիթ է նկատոված այնուեղ», — դրում է «Արձագանքի» աշխատակից Ա. Ա. Ա.:

«Զվիցերիայի հինգ համարականներում միայն ութ գերմանուհիներ են ուսանում, այնինչ օտար ուսանողուհիների թիվը 580-ից անցնում է»: Ապա, շարունակում է նա, «Լայպցիգի համարականում 1893 թ. 14 կին էին հաճախում որպես աղասուններիներ. դրանցից երեք հոգի էին միայն գերմանուհիք»:

Նետաքքը բարձրական և բնորոշ է այն, ինչ որ Ա. Ա. Ա. հաղորդում է գերմանացի՝ համարյա բացառապես յունկերական ու կապիտալիստական դասակարգերից հավաքագրվող՝ բուրչերի վերաբերմունքի մասին դեպի ուսանողուհիները. «Եվ ամենից ցավալին լայն էր, որ գերմանացի ուսանողությունը խիստ թըշնամանքով էր վերաբերմում դեպի կանանց բարձրագույն կըրթությունը: Ես աչքովս տեսա, թե ինչպես 150 հոգու չափ ուսանողներ ուտքները քսանցրին (գժգոհության նշան), երբ առողջապահ մտավ մի կին՝ Փիգիկայի դասախոսությունը լսելու: Ամաչկուտ, վրդովված օրիորդը դադարեց այլևս հաճախելու այդ դասախոսությունը»:

Իրո՞ք որ արդի Փաշիստական բեղմնակայանների ցուլերին լիովին արժանի նախորդներ...

Այդ «ընտրյալներն» այն կարծիքին էին, որ բարձրագույն կրթությունը, գիտության նվաճումներն անմատչելի են կանանց, այդ տղամարդկանց արտոնությունն է: Զարմանալու բան չկայստեղ, նկատում է Ա. Ա. Ա., որովհետև «...այդպիսի ստորկարծիք կանանց ընդունակությանց մասին շատ բնական է մի երկրում, ուր կնոջ նայում են գլխավորապես որպես մի արարածի, որ ստեղծված է երեխաներ ծննդու և խոհանոց կառավարելու միայն»:

Հենց այդ պատճառով էլ այն կանայք, որոնք Գերմանիայում դուրս էին գալիս իրենց համար նախանշված շրաջանակներից և ուր էին զնում տղամարդկանց վերապահված ասպարեզը, ստունում էին «արժանի» պատիճ, անելանելի վիճակի էին մատնում: Ա. Ա. Ա. պատճառով է, որինակ, որ Լայպցիգի միակ կին բժիշկն

եր Երկամյա պրակտիկայի մասին հետևյալն է Հաղորդել նրան։ «Եթե ևս չափառայի իմ գիտության վրա կորցրած թաճառ աշխատանքիս, ուրախությամբ գործակարարի սրացառության կատարմանեւի մեկ խանութում, քանի որ Երկու օտարում 18 հիլանդ եմ միայն ընդունել, և գրանցից 13-ը օտարներ են եղել և միայն 5-ը գերմանացիք» («Արձագաններ», 1895 թ., № 137, Ա. Ա., Քչերից մեկը)։

Ահա այսպես էին պատճում կապիտալիստական Գերմանիայի «քաջարի» բուրժեզը և նրանց պատվարժան հայրեն այն սակագաթիվ բարձրագույն կրթություն ստացած կանանց, որոնք վտրում էին՝ մանկանոցից ու խոհանոցից դուրս՝ իրենց ուժերի գործադրության համար այլ ասպարեզ ընտրել։



Ինչպես երեսում է վերեկ պատկերեց, որ գծագրեցինք անցյալ դարավերջի հայ մամուլի ցաք ու ցըլի գիտողությունների հիման վրա, արդի Գերմանիայի տերերը, Փաշխատական բարբարոս հափշտակիչներն ամաչելու տոփիթ չունեն իրենց խմանքիալիստական անմիջական նախորդների արարքներից։ Նրանք այժմ շարունակում են հրեշտակոր չափերի են հասցնում այն, ինչ որ արդեն մի զգալի չափով Վելչեր Ո Գերմանիայում և գրանցից էլ առաջ ստատորին ծիրեր էր արձակում այստեղ։

Ե՛վ սլավոնական ժողովուրդների ճնշման ու նույնիսկ ընացնեման քաղաքականություն, և՝ համաշխարհային ալիքասկոտության արյունոտ ախորդակներ՝ փոքր ու մեծ ժողովուրդների անհամար կոչերի գիտիների վրայով, և՝ անզորսութ ու անսահման սպառազինումների ծրագիր՝ արդ ամենն իրականացնելու համար, և՝ վայրագ յունկերական-կապիտալիստական ուժի ներկրությամբ պրոլետարական մասսաների համար, մասնավորապես իրավագործի ստորագաս միմարեկ կանանց համար հասարակական կյանքի շատ առարկելիներում, և՝ ռեակցիոն թեորիաներ ընաւըրյալ և ստոր ցեղերի գործության ու գերմանական ցեղի պիտականություն ստեղծելու համուկ ընդունակության մասին և այլն, — ահա մինչՓաշխատական Գերմանիայի իշխող դասակարգերի՝ գերմանական Փեղոդարական ու կապիտալիստական հափշտակիչների և բռնացողների արտաքին ու ներքին քաղաքականության պրակտիկայի և այդ պրակտիկան հիմնավորությունը «գիտական» թեորիայի մի քանի գծերն ըստ հայ մամուլի առանձին աշխատողների գիտողությունների՝ գրված կենսական կոնկրետ փաստերի անմիջական տպավորության տակ։

Մոտիկի անցյալի այդ փոքրիկ հայելու մեջ կարելի է ճանաչել արդի գերմանական ֆաշիզմի հրեակությանը կերպարանքը, որ առասպեկտական այլանդակությամբ հանդես է եկել գերմանական իմպերիալիզմի արյունութ հոգեվարքի օրերում։

\*\*\*


Վերջացնենք մեր համառոտ ակնարկն անցյալ դարի հայ լուսավորիչներից մեկի՝ Ստ. Նազարյանցի մի գատողությամբ, որ կարծես ուղղակի գրված է մեր սոցիալիստական հայրենիքը «կայծակնային հարվածով» ջախջախել ծրագրով Հիտլերի մասնեց լարբաջանքների դեմ։

Ստ. Նազարյանցը նշելով Նապոլեոնի հեշտ ու արագ հաղթանակներն Արևմտյան Եվրոպայի երկրներում, ընդդժում է, որ այդ անկարելի էր Ռուսաստանում, որ «կայծակի արագությամբ» այսեղ չէր կարելի հաղթանակի հասնել, որ այստեղ այդպիսի ծրագիրը գատարաբուժած էր անխուսափելի անհաջողության և կորստարեր էր գառնալու արդպիսի սիսալ հաշիվներով Ռուսաստանի վրա արշավող Նապոլեոնի համար։

Ահա այդ ուշագրավ դիտողությունը։

«Ռուսաց հոգի վերա անհուսալի էր, որ, ինչպես մինչեւ այժմ եղած էր, չուտով, կայծակի արագությամբ վճռվեր կոխվը։ Շուտափույթ շարժողությամբ անհկնակալ վերա հասնել թշնամուն, նորա ջոկ-ջոկ խումբերը մին-մին կոտորել և հաջողությունների արագությամբ սովորել շվարած հակառակորդը գետի ի խողիք հաշուության, — այս պատերազմական ճարտարությունը, որ գործ էր զրված առաջին հաղթության օրերի մեջ, հանդիպեցավ Ռուսաստանում այնպիսի արգելքների, որոց ո՞չ մի մարզու հանձարի գորություն կարող չէր հաղթել» («Հյուսիսակալ», 1864 թ., ամսատետր 10, Ս. Նազարյանց, Նապոլեոնի արշավանքը Ռուսաստանի վրա, էջ 610)։

Հատկապես մեր օրերում ուշագրության արժանի է հայ նըշանակոր լուսավորչի այս գիտողությունը «կայծակի արագությամբ» Ռուսաստանին հաղթելու անկարելիության մասին, երբ Փաշիստական խելագար եփերյառի՝ Հիտլերի «կայծակնային հարվածով» մեր սոցիալիստական հայրենիքը ծնկի բերելու ցնորդամիտ ծրագիրը վաղուց շառաջունով տապալված է, իսկ այժմ էլ մեր հերոսական կարմիր Բանակի հզոր հարվածներով մոտիկ ապագայի գործ է դարձել Փաշիստական բանդաների վերջնական ջախջախումը։



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ № 2  
ՀԱՅՈՒԹ ԳՐԱԴԱՐԱՆ

ՎՅ 02582, պատվեր 91, տիրաժ 300 ստորագրվել է տպելու 20/VII 1943 թ.  
ՀԱՍՈՒ ԺԱՂԱԿԱՆԻ ԿԵՐ ԹԵՐՅԵՐԻ և ամսագրերի տպաբան, ԵՐԵՎԱՆ



A II  
23901

ԳՐԱԸՆ

064.